

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԿԱՐԵՆ ՊԱՊՈՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

11.08.2014թ.

ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանն աշխատանքային այցով եղել է Ակունք համայնքում:

Համայնքային ենթակառուցվածքների գործունեությանը տեղում ծանոթանալուց հետո Կ. Պապոյանն այցելել է Ակունքի միջնակարգ դպրոց, որտեղ ընթանում են հիմնանաորոգման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների իրականացման պատասխանատուների հետ Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանը քննարկել է գործընթացը սահմանված ժամկետներում և որակով ավարտելուն վերաբերող հարցեր:

Այնուհետև Ակունք համայնքի ղեկավար Հ. Ռուբենյանի հետ համատեղ քննարկվել են համայնքի բյուջեի կատարողականին, ինչպես նաև վերջինիս արդյունքում համայնքանպաստ մի շարք ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր:

Կոտայքի մարզպետի տեղակալն ընդգծել է նաև մարզպետարան-համայնք համագործակցության կարևորություններն ու փաստել, որ այդ գործակցության պարագայում հնարավոր լուծումներ են ստանալու համայնքային տարբեր հիմնախնդիրներ: